

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրանքը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммас“:

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Վերջ չը կայ: Ներքին տեսութիւն
Նամակ Գրիգորովից: Նամակ Նովո-Իգնատի
Նամակ Ալեքսանդրովից: Նամակ Գանձակից
Նամակ Աստրախանից: Նամակ Խմբագրին: Ներքին
լուրեր: Արտաքին տեսութիւն: Թիւրքիա:
Փրանսիա: Մշակիչ: Հեղափոխութիւն: Յայտարար-
ութիւններ:

ՎԵՐՋ ԶԸ ԿՍՅ

Երբ որ վիճաբանութիւն ա-
նողները անազնիւ կերպով են
վիճաբանում, յեղաշրջում են ճշ-
մարտութիւնը, — այն ժամանակ
վէճը երբեք վերջ չունի:
Մենք ստիպված ենք դար-
ձեալ մի անգամ պարզ տե-
գիտներ դնել մեր յարուցած
խնդրի մասին կրօնի և ազգու-
թեան տարբերութեան վերա-
բերութեամբ:

Ոչ մի ազգութիւն չը կայ,
որ ամբողջութեամբ մի դաւա-
նութեան պատկանէր:

Կրօնը էական մասը չէ մի
ազգութեան. դաւանութիւնները
կարող են այլ և այլ լինել, բայց
ազգութիւնը այդ այլ և այլ
կրօններ դաւանողների դարձեալ
կարող է մի լինել:

Ազգութեան էական մասերը
սրանք են. մայրենի լեզու, հայ-
րենիք և ցեղ:

Ըսանց հայրենիք, առանց
հաստատ հող, որոշ գետին ուղի
տակ, ոչ մի ազգութիւն գոյու-
թիւն ունենալ չէ կարող: Եթէ
ազգութիւնը կորցնում է իր
հայրենիքը և ցրվում է ամբողջ
աշխարհի երեսի վրա, նա այլ
ևս ազգութիւն չէ:

Բայց ազգութիւնը կարող է
կորցնել ճիշտ հայրենիքը և այն-
քան ոյժ ունենալ որ ստեղծի
իր համար մի նոր հայրենիք:

Այն ժամանակ նա դարձեալ
կարող է շարունակել գոյութիւն
ունենալ որպէս ազգութիւն, ե-
թէ միայն պահպանել է և զար-
գացնում է իր մայրենի լեզուն:

Յեղը մինչև անգամ կարող է
փոխվել, եթէ ազգութեան ան-

դամները խառնվեցան ուրիշ ցե-
ղի հետ:

Կրօնը կարող է փոխվել, այլ
և այլ կրօններ մտնել ազգու-
թեան մէջ, — դարձեալ ազգու-
թիւնը կը մնայ, եթէ ազգու-
թիւնը պահպանել է մայրենի
լեզուն:

Յեղը կարող է փոխվել, ուրիշ
ցեղերի հետ խառնվել, — դար-
ձեալ ազգութիւնը կը մնայ, եթէ
մայրենի լեզուն պահպանվի:

Հայրենիքը կարող է փոխվել,
նոր հայրենիք ստեղծվել, — դար-
ձեալ ազգութիւնը կը պահպան-
վի, եթէ մայրենի լեզուն պահ-
պանված լինի:

Բայց եթէ մայրենի լեզուն
կորչի, մայրենի լեզուն անհետա-
նայ ազգութիւնից, — անմիջապէս
ինքն ազգութիւնն էլ, որպէս
ազգութիւն կանհետանայ: Կը
մնան միայն անհատներ, բայց
ազգութիւնը կը կորչի:

Եթէ մի ազգութիւն իր կրօնը
պահպանեց, բայց կորցրեց հայ-
րենիքը, իսկ կրօնի հետ պահպա-
նեց իր լեզուն, — նա դարձեալ,
եթէ բաւական բազմաթիւ է և
ցրված չէ, կարող է ստեղծել մի
նոր հայրենիք, թէև այդ շատ
քիչ ազգերին է աջողվել և ալ-
ժամ երկրագնդի վրա ազատ
ստեղծել չը կան:

Եթէ մի ազգութիւն պահպա-
նելով կրօնը, պահպանի մայրենի
լեզուն բայց մնայ հայրենիքում, —
նա պէտք է շտապի վերակենդա-
նացնել իր մայրենի լեզուն, որպէս
զի կենդանանայ որպէս ազգու-
թիւն, եթէ ոչ նա մնալով հայ-
րենիքում և պահպանելով կրօնն
էլ, եթէ կորցրեց իր մայրենի
լեզուն, կը լուծվի մի այլ, հա-
րեան ազգութեան մէջ, ուրեմն
կանհետանայ որպէս ազգու-
թիւն:

Եթէ մի ազգութիւն հաւա-
տարիմ պահպանելով իր կրօնը,
կորցրեց իր մայրենի լեզուն և
իր հայրենիքը, — այլ ևս ոչինչ չի
փրկի նրան որպէս ազգութիւն:
Նա գուցէ միշտ կը մնայ որպէս

առանձին ազանգ, բայց այլ ևս
երբեք չէ կոչվել ազգութիւն:

Ուրեմն կրօնի, ցեղի, մինչև
անգամ հայրենիքի փոխվելը չէ
փոխում ազգութիւնը: Միայն
լեզուի փոխվելը կատարեալպէս
ոչնչացնում է ազգութիւնը:

Ազգութիւնը առանց ընդհա-
նուր հայրենիքի և մի մայրենի
լեզուի չէ կարող գոյութիւն ու-
նենալ, բայց ունենալով որոշ
սահմաններով հող և յայտնի
ազգային լեզու, ինչքան էլ բազ-
մաթիւ լինէին այդ ազգութեան
մէջ այլ և այլ դաւանութիւններ,
ինչքան էլ խառն լինէր այդ ազ-
գութեան ցեղը, նա դարձեալ
կը լինի մի ազգութիւն:

Հայրենիք անշուշտ պէտք է
ունենալ: Եթէ կորած է հինը,
պէտք է ստեղծել նորը: Մայ-
րենի լեզուն պէտք է ունենալ,
որովհետև նա է մի ազգութիւն
միակից որոշող միակ գործիքը:

Բայց եթէ մի ազգութեան
ամբողջ գոյութիւնը միմիայն կը-
րօնից է կախված, — նա կը լինի,
այո՛, հաստատ ազանգ, բայց
երբեք չի լինի ազգութիւն:

Այդ պատճառով այն հայը
որ ապրում է հայրենիքում և
խօսում է հայերէն լեզուով, մեզ
համար մի և նոյն է նա ինչ
կրօնին է պատկանում: Նա
դարձեալ հայ է, նա աւելի հայ
է, քան թէ այն հայը որ կը օ-
նով հայ է, — թէև դա հնարա-
ւոր բան չէ, — բայց ապրում է
իր հայրենիքից դուրս և չը գի-
տէ իր մայրենի լեզուն:

Կաթօլիկ կամ բողոքական
հայը, որ գիտէ իր մայրենի լե-
զուն և ապրում է իր հայրենի-
քում, — նա աւելի հայ է, քան
թէ լուսաւորչական հայը, որ
ապրում է հայրենիքից դուրս և
չը գիտէ իր մայրենի լեզու, կամ
նոյն իսկ ապրում է հայրենիքում
և չը գիտէ իր մայրենի լեզուն:

Եւ այդպիսով յայտնվում է
որ լուսաւորչականների մեծ մա-
սը, որոնք չը գիտեն իրանց
մայրենի լեզուն, իսկապէս հայ

էլ չեն, որովհետև կորցրին այն
Փակտօրը, մայրենի լեզուն, որ
ջոկում է մի ազգութիւն միակից:
Ուրեմն ո՛ր մնաց այն սկզբունքը
թէ կրօնն է ազգութեան նեցուկ,
երբ կրօնը ունենով կարելի է
կատարեալպէս կորցնել ազգու-
թիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՐԻԳՈՐՈՎԻԻՑ

Սեպտեմբերի 30

Այն հարցը, որ սրբագրեց Մշակը՝ վերջնակա-
նապէս, ենթարկվելով խաւարամիտների ամեն տե-
սակ կեղտոտ գրաբարոյութիւններին, նրա այն
յաղթանակն է, որ պիտի համարվի Մշակի
անցեալ և ապագայ գործունէութեան դարդը: Այդ
հարցը կրօնի և ազգութեան գաղափարների մի-
մեկից տարբերելն է, որ դարերի ընթացքում
հայոց ազգի համար միշտ մի անթափանցելի խաօս
է եղել: Վերջապէս ով իրան չէ ուզում գուրկ հա-
մարել մի փոքր բանականութեան, նա պիտի
հասկանար թէ յիշաւի ազգութիւնն ասելով
հայը չը պիտի երևակայի իր աչքի առջև անշուշտ
էջվածների զանգակատունը կամ վարդապետի
վեղարը, այլ հայկական արևուն, լեզուն և հոգին:
Ամսիս 15-ին, անցնելով Օղէսայով Քիչնեկ,
մտադիր էի մի քանի օր մնալ այդտեղ իմ սեփա-
կան գործերիս պատճառով, բայց այնպէս
պատահեց, որ ստիպված եղայ շուտով վերադառ-
նալ Օղէսա, հանդիպելով և մի քանի ժամանակ
մնալով Գրիգորովի փոքրիկ քաղաքը: Այսպիսով
ինձ աջողվեց բաւական տեղեկութիւններ հաւա-
քել այս կողմերի հայ ազգաբնակչութեան մասին:
Ճշմարիտն ասեմ, երբեք մտքումս էլ չէր անց-
նում թէ Բէսարաբիայի վիճակում կարող եմ գտ-
նել մի այսպիսի մեծ հայոց տարր և այսպիսի դո-
րեղ շիւթական կողմից: Հայաբնակ քաղաքները
հետեւեալներն են՝ Քիչնեկ, Օրէշ, Հնէշտ, Բէյց,
Աքիրման, Իզմայիլ, Բաւուշան, Քիլի, Օղէսա,
Գրիգորով, Նիկոլայով և Խերսոն: Այս վերջին
չորս քաղաքները ըստ աշխարհագրութեան թէև
պատկանում են Խերսոնեան նահանգին, բայց հա-
յոց հոգևոր վիճակաբանութեան համեմատ բոլորն
էլ նախընթացելի են կազմում են մի անբա-
ժան վիճակ, որ կրում է Բէսարաբիայի վիճակի
անունը: Վերոյիշեալ քաղաքները շրջապատված են
մեծ գիւղերով, որոնց մէջ կան նոյնպէս բազմա-
թիւ հայեր: Հայ գիւղականը պարապում է այս-
տեղ երկրագործութեամբ, պարտիզպանութեամբ,
գրաստապահութեամբ և գիւղատնտեսութեան մի
քանի այլ ճիւղերով: Վարելի է ամենայն վստա-
հութեամբ ասել թէ համայն Կովկասի և Անդր-
կովկասի մէջ բնաւ չէ կարելի գտնել մի անկիւն,
որի մէջ ապրող հայ գիւղացիները և քաղաքացի-
ները այնպիսի ունեւոր լինէին, որպիսի այստեղի
հայերը, որոնց մէջ կան այնպիսի անուանի կա-
լուածատէրեր, ինչպէս Մանուկ-բէյ, Իշխան Ոսկե-
բէյ (ազնատօրէն Ոսկաբէյ), Ուրֆալ եղբայրներ,
Գայիբով, Բայիտ, Բոգոս, Անուշ, Լեբեզ, Հաջի-Դա-
րաբէյ և այլն: Սոցանից խրաբանչիւրը ունի այն-
պիսի ապարանքներ, շքեղ ամարանոցներ և զբոսա-
րաններ, որոնց վրա կովկասեցի հարուստ հայը
հասկացողութիւն անգամ չէ կարող կազմել: Նոյ-
նը կարելի է ասել գիւղացիների վերաբերու-
թեամբ, համեմատելով նրանց կովկասեան հայ
գիւղացիների հետ:

Այս բոլորը վերաբերվում է միայն Նիկոլայան
կողմին: Իսկ գալով այստեղի հայերի հայու-
թեանը, այս բառի կատարեալ մտքով, Բէսա-

10

Արսէն Տէր-Մարտիրոսեանց 3 ր., Գրիգոր Լազարեանց 3 ր., Կարապետ (Քայրեանց) Մելիքեանց 3 ր., Վանո Քայրեանց 3 ր., Սարգիս Աւետիսեանց 3 ր., Նաւատարիք Զորեանց 3 ր., Մելքիսէդէմ Ռաֆայելեանց 2 ր., Գրիգոր Նիկողոսեանց 2 ր., Տիգրան Կոնստանտինեանց 2 ր., Դաւիթ Աւետիսեանց 2 ր., Աւետիք Լազարեանց 2 ր. 10 Կ., Սարգիս Պետրոսեանց 1 ր., Գրիգոր Մէլիքեանց 1 ր., Սամուէլ Տէր-Ստեփանեանց 1 ր., Գրիգոր Տապաւադեանց 1 ր., Բարսեղ Մարտիրոսեանց 1 ր., Գրիգոր Ստեփանեանց 1 ր., Կարապետ Ստեփանեանց 1 ր., Գրիգոր Մանուկեանց 1 ր., Սարգիս Մանուկեանց 1 ր., Մի օմն 1 ր., Գրիգոր Բաղդասարեանց 6 ր., Ընդամենը 317 ր. 10 Կ.:

Յովսէփեան Կարապետիկեանց, Փանոս Տէր-Արքայանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թեմական տեսուչ Գ. Բարսեղեանց յայտնում է հետեւեալը: «Սեպտեմբեր 28-ին, Թիֆլիսի Սորաշէն եկեղեցու մէջ, պատարագից յետոյ սրբազան Ազգայինաց մի քարոզի մէջ յիշեց Ն աշէնի Սարգիսեան օրհորդաց զպրոցի նուիրատուների ազգանունները: Ի միջի այլոց սրբազանը ասաց որ Զարար Թամաշեան ուսումնաբանին 1000 ռուբլ ընծայեց: Հարկաւոր եմ համարում յայտնել, որ այդ գումարի կէտը այն է 500 ռուբլ. իմ նուէրս է:»

Հաստատ աղբիւրներից իմացաւ, որ Ներսիսեան զպրոցի տեսուչ պ. Նազարեանեան արգելել է զպրոցի աշակերտներին, այն էլ բարձր դասաների աշակերտներին, հայոց թատրոն մանկաւանդանց իրանից թողուլով չարացնելու, հակառակ դէպքում աշակերտներին մեծ պատիժներ են սպասում:

Պ. Յովսէփեան Գարիբեդէան Թամաշեան յայտնում է հետեւեալը: «Սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսի Սորաշէն եկեղեցու մէջ, պատարագից յետոյ սրբազան Ազգայինաց մի քարոզի մէջ յիշեց Ն աշէնի Սարգիսեան օրհորդաց զպրոցի նուիրատուների ազգանունները: Ի միջի այլոց սրբազանը ասաց որ Զարար Թամաշեան ուսումնաբանին 1000 ռուբլ ընծայեց: Հարկաւոր եմ համարում յայտնել, որ այդ գումարի կէտը այն է 500 ռուբլ. իմ նուէրս է:»

ՓՈԹԻՒՅ, պ. Պապովից ստացած երկու հազար ռուբլ գումարից 1000 ռուբլ ուղարկելից յօգուտ «Միացեալ ընկերութեանը»:

Պ. Կորգանովի կոնցերտը Արծրունու թատրոնում ինկու է ոչ թէ հոկտեմբերի 13-ին, ինչպէս յայտնած էր, բայց հինգշաբթի օր, հոկտեմբերի 16-ին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՐԻՔԻՆ

Աշակերտի Հայ գաղթականաց անուամբ 1877ին Ռուսական Հայաստանի մէջ հաւաքուած է Էջմիածնի աթոռին յանձնուած 17000 ռուպլին համար Տիֆլիսի Հայ լըրազրութիւնն անդադար բացատրութիւն կը պահանջէր Մայր աթոռէն, թէ ինչ իրաւամբ է ինչ նպատակաւ պահած էր այդ կարեւոր գումարը, զոր ժողովուրդն Աշակերտից զգալի գաղթականաց օգնելու համար նուիրած էր, և որ ներկայ մարդախանձ սովին ժամանակ կրնար շատ հոգիներ փրկել և թշուառութիւններ սփռելը:

Երկար լուծութենէ յետոյ վերջապէս Արաքստ ամառը կը պատահանէ թէ Վեհ. Կաթողիկոսին հրամանաւ յիշեալ գումարով արժեթղթեր գնուել են, որոց տոկոսով Աշակերտի գաւառին մէջ վարժարան մը պիտի հիմնուի և կառավարուի կողմէ:

Այս յայտարարութիւնը չենք զիտեր ինչ

տպաւորութիւն ըրած է Ռուսական Հայաստանի Հայ ժողովուրդը վրայ, բայց մեր վրայ ըրած տպաւորութիւնը զգալիորաբար խիստ տխուր է. վասն զի այդ գումարը կրնայ ներկայ սովուն ժամանակ մեծ օգնութիւն մատակարարել Պայազխի և Աշակերտի սովալուկ ազգայնոց, և երկրին աւերմանն ու ամայացման առաջն առնուլ նպաստել:

Որո՞ւ համար պիտի հիմնուի վարժարանն երբեք երկրին ժողովուրդը սովու տաղնապին չը զիմանալով ցիրուցան եղած, և իրենց զիւրերն ամայացած և կամ ամայանալու վրտանիկ ենթարկուած են:

Թէքէմանը Հաղիթաթ լրագիրը Պ. Բարձամի նամակին առթիւ ըրած խորհրդածութիւնը սա տղերով վերջացուցած է. «Հայք ինքնօրինութիւն և անկախութիւն պիտեան, բայց լոկ ցոյց մ'է այս զոր այժմ զիւ պահանջեն իրենց շահերն. ապա թէ առ, միթէ չեն զիտեր թէ ինչ պիտի լինէ չափ մը Հայոց անկախութիւնն այնպիսի զերկրի մը մէջ, որոյ մէկ կողմն Արապիստանն է, բուն իսկ երկրը Քիւրտիստանն է, մէկ զկողմը Պարսկաստան, և միւս կողմն ալ Ռուսաստան, որ ամեն ինչ կրնայ կը սպառնայ»:

Վրասն ընտրող ազգային մը, Գարեթիւն էքէմանի Արքայան, սկստ. 10 թուով նամակ մը կ'ուղղէ Լա Քիւրքի լրագրին, զանգատելով որ Պուլլարիոյ Ներսիսեանց ժողովը, որ ի Սփիւս կ'ընտրուի, մինչդեռ թուականը կը յատկացնէր Պուլլար Արքեպիսկոպոսաց, Նախկոպոսաց և Տէպիոտաց, ինչպէս նաև Իսլամ Միւսթիֆիսեան և Հրէայ Նախմանեան, ոչինչ յատկացուցած է Պուլլարիոյ Հայ հասարակութեան: Իշխանութեան երկրին մէջ այսօր 1200 Հայ ընտանիք կան, որք Շուքի, Ռուստուք, Վառնա, Պաղարձըք, Միլիսքըք և Վրասն կը բնակին, և ոչ եպիսկոպոս, ոչ ալ քահանայ ունին, անոնց ծախքն հաշուու անկարողութեան պատճառաւ:

Եթէ, կ'ըսէ նամակագիրն, յառաջիկայ նստաշրջանին մէջ այս խնդիրը Պուլլարիոյ Ներսիսեանց ժողովին ուշադրութեան ներկայի, սա անշուշտ ի նկատ կ'առնու, և բացառութիւն մը չընկնով Հայոց համար, որք Պուլլարիոյ ուրիշ հասարակութեանց չափ հոգածութեան արժանի են, դուք մը կը քուէարկէ նաև Հայկական եպիսկոպոսութեան մը համար ի Պուլլարիո: Նամակագիրը Բուլլարիա բնակող Հայոց անուամբ, այս խնդրին վրայ Ազգային Պատրիարքարանին ուշադրութիւնը կը գրաւէ, և վստահ է որ եթէ Ներսէս Արքազան այս գործին համար Պուլլարիոյ կառավարութեան քով միջնորդէ, իւր միջնորդութիւնը փափաքելով արդիւնքը կ'ունենայ:

(Մասիս)

ՖԻՆԱՆՍԻՆ

Կրօնական մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Փարիզից ստացվեցան այնպիսի տեղեկութիւններ, որոնք հակառակ են աւստրիական պաշտօնական և անդրապահ միւստրիական լրագրիներին հաղորդութիւններին, իբր թէ բոլոր պետութիւնները համաձայնել են ընդունել Անգլիայի առաջարկութիւնները: Փարիզի հեռագիրը հաղորդում է, որ Ֆրանսիական հանրապետութեան նախագահը միւստրիների խորհուրդի մէջ մտադիր է ընկել, թէ ինչպէս պէտք է դրոճել, ի նկատ ունեւում այն նոր գործիւնը, որ ստեղծել են Աւստրիան և Վերմանիան, որոնք տառապանքով են ընդունել Անգլիայի առաջարկութիւնները:

Այդ հեռագիրը ցոյց է տալիս իր հաւորդած լուրի աղբիւրը: Որովհետեւ նոյն հեռագիրը գրականապէս յայտնում է, որ Ֆրանսիական միւստրների խորհուրդի մէջ

վճիռ է կայացել Ֆրանսիական նաւատորմի յետ կանչելու մասին, որեւի կարելի է ենթադրել, որ այդ հեռագիրը ուղարկել են Փարիզի պաշտօնական շրջանները, որոնք զոնեա մտաւորապէս յայտնի պէտք է լինի թիւրքիայի դէմ գործադրելի ստիպողական միջոցների մասին եղած բանակցութիւնների զրուցիւնը:

Ներկայից է ենթադրել, որ Ֆրանսիական կառավարութիւնը Աւստրիայի և Վերմանիայի տառապանքը եղանակելով լինի այդ երկրներին կիսապաշտօնական լրագրիներին հաղորդութիւնները: Վստապաշտօնական լրագրիները չէ կարելի տեղեկութիւն ստանալ Վերմանիայի կամ Աւստրիայի տառապանքի մասին: Ուրեմն Ֆրանսիական կառավարութիւնը այդ տեղեկութիւնը ստացել է մի այլ աղբիւրից, որ յայտնի է անգլիական կառավարութեանը, որովհետեւ Գլազտոնի միւստրութիւնը այնպէս է վարվում, կարծես հաւատարմաց է, որ եւրօպական համաձայնութիւնը կայացել է թիւրքիայի դէմ ստիպողական միջոցներ դրոճադրելու մասին:

Այս հակասութիւնները նրանով կարելի է մեկնել, որ Անգլիայի բանակցութիւնները եւրօպական միւստրիստութիւնների հետ առաջացել են մինչ այն աստիճան, որ Գլազտոն և Վերմանիան իրենց վերջացած են համարում, մինչդեռ համաձայնութիւնը վերջնական ձև չունի: Պարզ է ուրեմն, որ Քիւրքի լրագիրն անարժան է Վերմանիայի և Աւստրիայի տառապանքի մասին, որպէս զի Ֆրանսիան չընդունի Անգլիայի առաջարկութիւնները: Եթէ, Ֆրանսիան այսպէս վարվի, Վերմանիան և Աւստրիան առթիւ կ'ունենան յետ առնել իրանց համաձայնութիւնը, որը երեւի պայմանաւոր է:

Այս դէպքում պետութիւնները երկու կողմի կը բաժանվին, որոնցից մէկը կազմված Ֆրանսիայից, Աւստրիայից և Վերմանիայից, կրնայ իմանար եւրօպական պետութիւնների միջամտութեան արեւելեան գործերի մէջ: Եւրօպական համաձայնութիւնը կոչանայ և դրա պատճառը, թէպէտ և անկամայ, Ֆրանսիան կը լինի:

Փարիզից Բերլինի «Նացիոնալ-Ճայտունը» լրագրին գրում են, որ Ֆրանսիական կառավարութիւնը կրկին իրազեկուած մարտի հրամանները, փակելով արդեւի միաբանութիւնների եկեղեցիները: Այդ գործը կը սկսեն կատարել հոկտեմբերի 10-ից: Փորձին ծանօթ շրջանները հաւատարմութեան, որ պապի յարաբերութիւնները Ֆրանսիական կառավարութեան հետ չեն ընդհատվի, այլ պապական նուիրակ կարծաւսե արձակուրդը կը վերցնի և կը հեռանայ Ֆրանսիայից:

Իտալական «Ռիբիտտո» լրագիրը ընկնով Ֆրանսիայի բռնած ընթացքը Արևելքի մէջ, ասում է հետեւեալը: Ֆրանսիան յուսական խնդրի մէջ թէ Բերլինի կոնգրեսի, թէ Բերլինի կոնգրեսիցի ժամանակ սկսեց առաջնակարգ դեր կատարել: Վարդիսը սոսն և Ֆրէյսինի միւստրութիւնները ուրիշ պետութիւնների առաջ հերեմակաւորութեան պաշտպան հանդիսացան: Ֆրէյսինի մինչև անգամ համաձայնեց զիմուորական գործերի ուղարկել Աթէնք յուսական գործերը կազմակերպելու համար: Այժմ բոլորը փակվել է. զիմուորական գործակալների Աթէնք ուղարկելու միջոց թողված են, ծովագետ Լաֆոնիս տուած հրահանգները չափազանց առհասարակութեան են նրա իրաւունքները, իսկ Ֆրանսիական մամուլը ծաղրում է ծովային ցոյցը: Լրագրի կարծիքով Ֆրանսիայի պատիւը նոյնքան բաւականութիւն պէտք է ստանայ, որքան և ուրիշ պետութիւնների պատիւը և որ այժմ անվտանգ կը լինի Ֆրանսիայի համար անջատվել եւրօպական համաձայնութիւնից:

Իտալական «Նացիոնալ» լրագրի մէջ ապակած է Ֆրանսիական արտաքին գործերի այժմեան միւստրի նամակը, որի մէջ Բարտեղի մի Սեն-Երըր ասում է, թէ ինչը կարելի է Ֆրանսիայի բարեկամ լինելով կաշխատել, որ Ֆրանսիայի և Իտալիայի յարաբերութիւնները բարեկամական լինեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսկաստանի Սպահան քաղաքից մեզ գրում են. Վաղոց այստեղ զգացվում էր մի կանոնաւոր ազգային զպրոցի կարևորութիւնը: Տեղային վին զպրոցները անհամապատասխան լինելով ժողովրդի պահանջներին, ծնողները ստիպված էին իրանց զաւակներին ուղարկել օտար երկրներում ուսում առնելու: Ամեն տարի հարիւրաւոր պատանիներ ուղարկվում էին Հնդկաստանի Կալկաթայ քաղաքը:

անգլիական զպրոցները մոտեւում համար: Այդ աշակերտների մեծ մասը ուսումը աւարտելուց յետոյ այն եւ չէին վերադառնում իրանց հայրենիքը, մնում էին Հնդկաստանում, իրանց համար գործ, կամ պաշտօն գտնելու համար: Իսկ եթէ վերադառնում էին, նրանց այն եւ ճանաչել չէր կարելի, լինում էին բոլորովին օտարացած, մինչև անգամ մարերի լեզուն մոռացած: Այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով, Սպահանի Հայ հասարակութիւնը մտածեց մի կանոնաւոր ազգային զպրոց ունենալ. ստորագրութիւն բացվեցաւ և հաւաքվեցաւ 10,000 թուման պարսից գրամ նոր բացվելու զպրոցի անունով: Ստորագրութիւնը դեռ շարունակվում է: Դիմաւոր դժուարութիւնը նրանում է, որ Սպահանը ամեն հայաբնակ կենտրոններից հետո գտնվելով, զպրոցի հոգաբարձութիւնը օրինաւոր ուսուցիչներ գտնելու մէջ մեծ կարօտութիւն է գգում:

— Կ. Պոլսի «Մասիս» լրագրի մէջ կարդում ենք. Արայ ցեղերը ապստամբելով, պաշարեցին Սուլթանի քաղաքը, որ գտնվում է Բաղդադի կուսակալութեան մէջ: Ապստամբութիւններ և աւազակութիւններ կը գործնեն: Նրանք է, ասիական թիւրքիայում օտարազգի մասնատական ցեղերից շատերը գրգռված են թիւրքերի դէմ:

— Թէքէմանից մեզ գրում են. Պարսկաստանի առաջին վեհաժողովը ստորագրած պայմանագրի լինելու պատճառը մէկ միջոց թուածն է (մոտ չորս միլիոն ռուբլ) արքունի գանձարանից պակասելը: Վճարված էր սա զրադամի բոլոր կայքերը դրաւել և արտոյի խորանան, բայց Շահը ներքեց, հրամայելով միան հայրենիքին նայել:

— Լրագրիներում կարդում ենք որ այս օրերս վախճանվեցաւ յայտնի երաժիշտ—հեղինակ Ժակ Օֆենբախ, որ ծնվեցաւ 1819 թ-ին գերմանական Կոնստանցապոլս գերմանացի—հրէայ ծնողներից: Նա յայտնի եղաւ իր բաղամիջի և շնորհալի օպերաներով, որոնք պատկերային ամբողջ արվարձի շուրջ և որոնք երաժշտական թեթիւ և դուրեկան եղանակները ն յիշան սովորական է լսել եւրօպացու, ասերկիացու և ասիացու բերանից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՍԵՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 8 հոկտեմբերի: Ֆելիքս Պիա դատարարված է 2 տարվայ կալանաւորութեան և 10000 ֆրանկ տուգանքի արքայապետութիւնը պաշտպանելու համար:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐ, 9 հոկտեմբերի: Կոմս Սալիսին թոյլ է տուած հրատարակել «Պուլլարայա ձգվեցաւ» վերնագրով ամսագիր: «Աթէնա Բիւս» ասում է. Բ. Կրան խաղացած թատրոնական խաղը Դուլցինիոն վերջնականապէս զիջելու մասին եւրօպական կառավարութիւններին նորից կասկածների առթիւ տուեց Բ. Կրան անկեղծութեան մասին: Այսօր, հոկտեմբերի 9-ին բացվեցաւ Ս. Պետրքոյ լրի մէջ ուսաց երկաթուղիների բոլորներ կապուցուցիւնների 12 որդ ժողովը:

ՓԱՐԻԶ, 9 հոկտեմբերի: Նեննայի գլխաւոր խորհրդարանը Արիական ծովից Ֆրանսիական նաւատորմի յետ կանչելու պահանջը մերժեց 31 ձայներով բաղմութեամբ 30-ի դէմ:

ՐԵՆ, 8 հոկտեմբերի: Այսօր այստեղից արտաքսված են կարմիրները: Դաները ուժով են բացված: Կարապազութեան համար զորքեր են պահանջված:

ՄԱՐՍԵՒ, 8 հոկտեմբերի: Պոլցիային հրամայած է Կապուլիների վրայի մօտ հաւաքվող ամբոխի խուճերին ջնջել:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐ, 9 հոկտեմբերի: Այստեղ բացվեցաւ բալիւրային ճանապարհ:

ՊԵՏ, 8 հոկտեմբերի: Ունգարական պատգամաւորութիւնը Վիւրկի Տիսային իր նախագահ ընտրեց:

ՓԱՐԻԶ, 8 հոկտեմբերի: Կիւպրիա նաւը Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայեւիչի հետ այսօր գուրս դ'աջ Բրեստից:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐ, 9 հոկտեմբերի: Պետական բանկի 5¹/₂ տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 87 Կ. երկրորդ 92 ր. 62 Կ., երրորդ 93 ր. 25 Կ., չորրորդ 92 ր. 62 Կ., ներքին 5¹/₂ տոմսակը փոխաւորութեան տոմսակը արժէ 216 ր. երկրորդ 211 ր. 50 Կ., արեւելեան տոմսակը փոխաւորութեան տոմսակը արժէ 90 ր. 75 Կ. երկրորդ 90 ր. 62 Կ., երրորդ 90 ր. 50 Կ., ոսկի 8 ր. 20 Կ., Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24 պէնս, ուսաց 100 ր. Համբուրգի վրա 204 մարկ, 50 պէն, Փարիզի վրա 254 ֆրանկ 50 սանտ:

Իմացիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՔՈՒՐՆԻ

Типографія братьевъ Давидовыхъ